

խկ երբոր ձգձգող բնութիւն ունենայ , բոլոր մտածածները անդիի աշխարհքը պէտք է որ ընէ :

Ձգձգող բնութեան վնասները այնչափ աւելի ծանր են , որչափ որ չեն երևար . աս բնութիւնը ունեցողը՝ շատ անգամ խոհեմ ու հանդարտ մարդու տեղ կ'անցնի , բայց ամենեւին ներհակն է : Վործքի մը պարագաները կը մտածեն , ըստ այնմ իրեն խորհուրդ կուտան . մէկէն ընելու ըլլայ , գործքը առաջ կ'երթայ կը յաջողի : Ինչ կը ձգձգէ , պարագաները կը փոխուին , արւած խորհրդովդ գործքը չի յաջողիր կը խրի . դուն անխոհեմ կը սեպուիս՝ անիկայ ձգձգող սեպուելու տեղ :

Ձգձգող բնութիւնը հիներուն երևակայած նաւակալ ձուկը կը նմանի , որ նաւուն ետեւը կ'աչելու որ ըլլայ , ամէն յաջող քամի , ամէն ջանք չի բաւեր նաւը առաջ տանելու : Ետեւ հանգարտութեան կը նմանի , որ քան զամէն ժայռ , քան զամէն մրրիկ աւելի արգելք է նաւուդ առաջ երթալուն , ասանկալ ձգձգելը ամէն բանի արգելք է :

Ձգձգող բնութիւն ունեցողին հետ գործք մը ունենաս ընելու՝ հոգիդ կ'ելլէ , մինակ ընելէն շատ աւելի կը յոգնիս , չուանով նաւ քաշելու պէս զինքը պիտոր քաշես որ շարժի . բայց ինքը կը կարծէ որ իր չի շարժելովդ զքեզ արտօրանքի վտանգներէն կը խալըսէ : Ինքը բանի մը ձեռք չի զարներ , դուն ձեռք զարնես , ու յանկարծ անյաջող երթալու որ ըլլայ , “Տեսար , ես անոր համար չրի ատ բանը ,” կ'ըսէ . թէպէտ և ծուլութեան ու վախկոտութեան համար ըլլայ չընելը : Բանի մը ձեռք չի զարներ , որպէս զի չիսալի . բայց ամէնքը իրեն պէս ընելու որ ըլլային , աշխարհքս արձաններու թանգարան մը կը դառնար , ու ամէնքնիս ալ մէջը շարուած արձաններ : Թէ որ մարդս չի քալէ՝ վախնալով որ յանկարծ կը սահի կ'իյնի , անդամալոյծ կը դառնայ . թէ որ երկրագործը ցորեն չիցաներ՝ վախնալով որ յանկարծ կարկուտը կը զարնէ , հաց չէինք ունենար : Բայց ձգձգող

մարդը “ Ի՞նչ աղէկ մը մտածենք , ըսելով՝ ինքը զինքը կը խաբէ . չի մտածեր որ մտածէն ալ չափ ունի . թէ որ մտածելովդ վարուցանի ժամանակը անցնելու ըլլայ՝ պարսպ կ'երթայ ցանածդ . մինչև որ տաքցուցած երկաթէդ ինչ շինելդ մտածես , երկաթը կը պաղի . ամէն բանը իր ատենովը կը յաջողի : “ Բայց դիւրին բան չէ , կ'ըսէ , ձեռք զարնելու բանս ,” չի մտածեր որ եթէ դիւրին բան ըլլար՝ ան ատենը կատարեալ ծուլութիւն կ'ըլլար ըրածը . դժուարութիւններն են որ զինքը սոսկ ձգձգող ըսուելու արժանի կ'ընեն : Ինչո՞ւնք դժուարութեան խիստ քիչ գործք կ'ըլլայ , նաև պտուղ մը ուտելու համար՝ բաց՝ի հասցընելու աշխատանքէն՝ կեղևն ու կուտն ալ հանես պիտոր . վարդ ալ ժողվելու որ ըլլաս , մատերդ քանի մը փուշ խայթելը աչքդ առնես պիտոր . յիշէ առակը “ Ով որ գործքը չի սկսիր ամէն դժուարութիւն վերնալու սպասելով՝ գետին ջուրը ցամքելուն կը սպասէ՝ որ դիմաց անցնի ,” :

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Իշխանի :

Բ .

“ Ի հայտ ոչ ինչ մեծագոյն և
“ Ի Պարս՝ քան զԱրշակուն
“ նեաց տոհմ , որ և յԱրա-
“ համէ սերեցան աստ ,” :

Ս . ԳՐ . ԼՈՒՍԱՌՈՒՉ

ՍԵՐՈՒ Նահապետն Իբրահիմ իր Սառա կնոջն մեռնելէն ետեւ՝ ծերութեանն ատեն Իստուծոյ ազգամամը՝ որ կ'ուզէր զինքն շատ ազգերու հայր ընել , Բեառուրա կամ Կենդուրա անունով

կնիկ մ'ալ առաւ և վեց զաւակ ունեցաւ, Լամբան կամ Օեմբան, Յեկտան կամ Յեկսան, Սադան, Սադիան, և այլն. զորոնք՝ երբոր մեծցան՝ զատեց Խաճակէն և զրկեց դէպ 'ի արեւելք: Սուրբ գիրք այս վեց որդւոցմէ միայն երկրորդին և չորրորդին զաւկըներն կը յիշեն, և անդրանիկ որդւոյն վըայ կը լռեն, որ դիտելու արժանի է. վասն զի սուրբ գրոց սովորութիւնն է աւելի անդրանկաց սերունդքը յիշել: Երբ հաւանական պատճառն այս է, որ Լամբան տնով տեղով ելած Եսրուոց և Բքաբիոյ սահմաններէն հեռացեր է, և իրեն սերունդքը անծանօթ մնացեր են չրէից. հեռանալուն պատճառն ալ մեր ազգային հնարիւր պատմիչք կուտան. Լամբան՝ իր երկու եղբարքը ըստ պաններ է զՅեկտանն և զՍադանն. անոր համար Բքաճամալ զինքը հեռացուցեր է իր պզտի եղբայրներովն. և հոն՝ կ'երևայ թէ սպաննած եղբարցը մատղաշ զաւկըները միայն մնացեր, ու վերջը ազգ եղեր են Բքաբիոյ կողմերը և չրէից ծանօթացած:

Լամբան իրեն տնովը գնաց Եսրեստանեաց և Բքեաց սահմանները անցաւ՝ վերին Եսիոյ այն ատենուան տիրապետող Սկիւթաց ազգին սահմաններուն մօտ՝ հոն մեծցաւ, բազմացաւ և իր ցեղը անուանի եղաւ: Բայց իրեք կամ չորս հարիւր տարի վերջը՝ այս օտարական ցեղը ատելի կամ կասկածելի ըլլալով Սկիւթացոց՝ հալածուեցաւ Եսիոյ վերին հիւսիսային կողմերէն, և ամփոփեցաւ Բակտրիացոց կողմերը, Պարսից աշխարհին արեւմտեան հիւսիսային դին: Բաջ յայտնի չէ թէ ինչպէս կ'անուանէր Լամբանայ ցեղը Սկիւթացոց և Բքեաց մէջ, իր անուամբն թէ Բքաճամայ. կրնանք կարծել, թէ այս ետքինիս անուամբն ըլլար, որովհետեւ Բքաճամայ անունը մեծ էր, և իր բնակած կողմերուն թաղաւոր կը սեպուէր. գուցէ այս հալածական Բքաճամեանց մէկ ճիւղն ալ եկաւ Նայաստան, որ հնուցմէ 'ի վեր շատ փախտաւկան իշխանայ ապաստա-

նարանն եղած է իր ամուր լերանց և հիւրընկալ իշխանայն համար. և կամ այս ճիւղը, կամ Բքաճամա հաւատարիմ ծառային Եղիազարայ որդւոյն ցեղը, (որ Խաճակայ անհաւատարիմ գտուելով՝ փախեր Նայոց Բքարատ աշխարհքը եկեր էր, ինչպէս յիշեր է մեր հին պատմեաց մէկն) Նայաստանի մէջ ազգատոհմ մ'ալ աւելցուց՝ Բքաճամեան անունով, և գուցէ այս ըլլայ մէկ պատմի մը յիշած Նայոց Բքաճամեանց ցեղը, և ասոր ալ յարմարի Լուսաւորչայ ըսածն՝ թէ “Երաճա” մէ սերեցան աստ:

Բայց բուն Լամբանայ մեծ ցեղը՝ ի Սկիւթացոց հալածուելուն համար Պարթևք ըսուեցաւ, որ անոնց լեզուով Նալծեալ կամ Յրոտեալ ըսել է. ինչպէս կը վկայեն թէ մեր պատմիչք թէ Յոյնք և թէ արեւելեայք, որ Սկիւթի կամ Սկիւթ (Սկիւթի) կը կոչեն Պարթևաց թագաւորութիւնը, և կը թարգմանեն թագաւորք Յրոտեայ կամ Սրաթախանայ. թէպէտ Յովհաննէս կաթողիկոս Բաղաթիւն կը թարգմանէ զՊարթևք, և Սարդան կ'ըսէ թէ “Պարթև (ըսուեցան) վասն 'ի չորից ազգայն (Սարաց, Պարսից, Նայոց և Բքաճամայ) թևեալ լինելոյ այս ինքն Պարթևեալ” և Ստեփանոս Բիւզանդացի՝ նոյն անունը քարանձաւոտ և ճախնային տեղ բնակող ալ կը թարգմանէ. սակայն հաւանելի է առաջին կարծիքը, թէ բազմաց վկայութեամբ, և թէ անով ալ՝ որ ուրիշ շատ հին արշաւանք ընող ազգաց անուանքն ալ զանազան աշխարհքներուն մէջ Նալծեալ կամ Յրոտեալ կը թարգմանին: Բքաճամայ Պարթևք բռնութեամբ օտարելի մը ընկած, ուր չորս դին կտրիճ ազգեր կային՝ Սկիւթացիք, Բակտրիացիք, Սարք, Սարք, Պարսք, և այլն, պէտք եղաւ որ թէ բարեկամութեամբ և թէ քաջութեամբ իրենց պատիւը և ցեղը պահեն. և թէպէտ անուննին Նալծեալ էր, բայց իրօք տիրապետող և իշխող ազգ մը եղան Բակտրիացոց հին թագաւորութեան մէկ մասին վը-

րայ, որ իրենց անուամբ Պարթևաց աշխարհ կամ Պարթևաստան ըսուեցաւ, և նաև Պարտաւ: Եւրան իր անդրանիկ որդւոյն անուամբ քաղաք մը շինեց եւ Վուշանաց երկիրը Ռաւհ կամ Պաշլ, որ հին Ռակտրիոյ մայրաքաղաքէն զատ կ'երևայ. այս երկուքին մէկն ինչուան հիմայ ալ Պալիս անունով կեցած է Ռուքբաստանի մէջ, և անկէ Պարթևք՝ Պաշլաք կամ Պալհաուենիք ալ ըսուեցան. այս Պարթևաց քաղաքն էր որ Բրտաշիր Սասանեանց՝ Պարթևաց թշնամին կը խոտանար տալու Բնակայ Պարթևի՝ թէ որ սպաննէ զհայոց պարթևագուն խոտրով թագաւորն. « Բալ սպանաւ, նեւ զխոտրով և առնուլ զՊաշլաւն Պարտաւայ »: Պէտք է դիտել հոս որ Պաշլ հնդկաց սանաքրիտ մայր լեզուով ածիլ կը նշանակէ, այսպէս ալ պարսկերէնի մէջ. ուսկից առաջ եկած է Փէշլէւան կամ Փէշէւան անունը՝ որ կը նշանակէ մեծահասակ, կտրիճ, ըմբիշ. և ահա նոյն մտքով՝ մեր մէջ ալ կը տրուի Պարթև անունը մեծահասակ եւ կտրիճ մարդկանց՝ պարթև մարդ ըսելով: Պարթևաց կտրձութիւնը շատ աղէկ ճանցան երկայն դարեր (3)րդ եւ հռոմայեցիք, որոնցմէ մէկն՝ այսպէս կը նկարագրէ զանոնք. « Ի դրանց իրազբից մինչև ի պարեխս անդր բնակեալ են Պարթևացդ ազգ, արքա քաջամարտիկք, կորագեղունք և ամենայն պատերազմական արուեստին հմտագոյնք: Եւ նոցա սովորութիւն խոփով զերկիր պատառել կամ արօրադիր ակօսաբեկ լինել ի դաշտի. ոչ թեւ ճակօք զարիս հերձանել և ոչ զանդեայ յարօտ ճարակել. այլ անդրստին յանտիական հասակէն և ի խանձարոց սիրեն զնժոյգ, կրթին ի նետաձգութիւն. դռնչին քաղաքք նոցա ի շկահիւն աղեղանց և ի շաջիւն նիզակաց. ամենայն ուրեք օդապարիկ երիւարաց լսելի լինին ըն-

» թացք: Եւ ինչ չև առգեալ զճակատս ի քիրտն խաղմարար, ոչ բազմին յընթրիս, և զկերակուր իւրեանց հայթհայթ են յորսոց շամփրահար առնեալով: »

Հազար տարիի չափ Պարթևք իրենց երկիրը ընդարձակելով, և Սարաց ու Պարսից ինքնակալութեանց աստէն Բսիոյ բազդը փոփոխ կրելով Վիւրոսէ վերջը՝ Պարսից տէրութեան մէջ անուանի ազգ մը և մեծ գաւառ մը կը սեպուէին. և Գարեհի ու Վսեղքսէսի բանակներուն մէջ առանձին զօրավար ունէին: Իսկ երբոր Ռակեդոնացին Բղէքսանդր՝ Բսիոյ հին տէրութիւնները լռեցուց, Պարսից և հայոց թագաւորութիւններն ալ վերցուց, Պարթևաց մէջէն ելաւ քաջ իշխան մը Բռշակ անունով, որ Բղէքսանդրէ 60 տարի ետեւ՝ (3)րդերը հալածեց իր երկրէն և կամաց կամաց սկսաւ Բսիոյ տիրել. ասոր անունէն իր ցեղը ըսուեցաւ Բռշակունիք, զոր ուրիշ արևելեայք Բռքունիք կամ Բռքանեանք կը կոչեն: Իր թուր կամ թուրներէն մէկը որ նոյնպէս Բռշակ կ'անուանէր և Սեծ ըսուեցաւ, բոլորովին (3)ունաց և Սելեւկիացուց իշխանութիւնը վերուց վերին Բսիայէն, և նորէն իր աթուր հաստատեց Ռահլի մէջ, որով իր ցեղը յատուկ Պաշլաուենի ըսուեցաւ, իսկ Բռշակունեաց անունը աւելի սեփական եղաւ հայոց: Եւ ասն զի մեծն Բռշակ վերին հայաստանի ալ տիրելով իր ընդարձակ տէրութիւնը չորս աշխարհք բաժնեց, առջինը իրեն պահեց. երկրորդն որ էր հայաստան շրջակայ գաւառներով՝ տուաւ իր Սաղարշակ եղբորը կամ որդւոյն, և ազատ թագաւոր դրաւ հայոց. միայն թէ ինքն որ Պարսից կ'իշխէր՝ նախագահ էր, Սաղարշակ երկրորդ. անկէ ետեւ կու գային մէկալ երկու թագաւորութիւններն:

Բրիտոսէ 149 տարի և ասկէ ըման 2000 տարի առաջ՝ եկաւ Սաղարշակ հայկազանց 180 տարուընէ վեր կործանած թագաւորութիւնը կանգնելու և աւելի փառաւորելու. և ուրիշ ինքնա-

¹ Զէնոք:

² Դիոնիս. Տիեզերագիր:

զլուի իշխանները վերցնելով՝ ինքը միապետեց Հայաստանի և անոր մերձաւոր գաւառներուն, ինչպէս որ եղբորմէն խրատուեր էր, թէ Բնդարձակէ սահմաններդ որչափ կրնաս, « () Ի », սահմանք քաջաց զէնն իւրեանց, որ « քան հասանէ այնքան ունի » : () Եւ պէտ Սաղարշակ Պարթևական աշխարհակալութեան հետ Հայկական չափաւորութիւնն ալ միացնելով՝ աւելի միտք դրաւ գաւառները երջանկացնել քան թէ երկրնցնել : Հատու զէնքն ամբիփեց՝ շինութեան գործիքն առաւ և որպէս զի խաղաղութիւնը չխռովի՝ աթոռ դրաւ Հայաստանի վերջի սահմանները և բուն Հայաստանէն դուրս՝ Սժմնայ մէջ : Վասն զի այն կողմէն միայն վախ կար Յունաց յարձակմունքէ, որպէս զի պատրաստ գտուի թէ որ շարժելու ըլլան :

Հոս չենք ուզեր Սաղարշակայ բոլոր վարքը պատմել, բայց միայն կը յիշեցնենք որ նոր և մեծ թագաւորութիւն մը (ինչպէս էր Հայոցն) կանգնելու և բարեկարգելու համար՝ Սաղարշակայ նման մէկը գտնել՝ մեծ և աննման բաղդ էր : Բոլոր ազգաց պատմութեանց մէջ ալ իրեն նման հազիւ կը գտուի : Վասն զի ունէր քաջութիւն և վայելչութիւն, և անոնցմէ վեր աշխարհաշինութիւն և խոհեմութիւն : Եւ սքանչելի խոհեմութիւն մը՝ տիրած ազգին անունը պայծառացնելու և անոր սովորութեանց և ախորժակին յարմարելու, որով այնպէս սիրելի եղաւ Հայոց : Ընդունեցաւ անոնց լեզուն և սովորութիւններն, և անոնց ալ պատուելի և պաշտելի ըրաւ Ղրաղունեաց անունը : Եւ քիչ ատենէն ուրիշ տարբերութիւն չմնաց երկուքին մէջ՝ բայց եւ թէ իրենց հին ծագումը : Որովհետեւ Ղրաղունիք ոչ 'ի Յաբեթայ և 'ի Հայկայ, այլ 'ի Սեմայ և յԱբրահամ ծագեր էին, մեծ տարբերութիւնը լեզունին պիտի ըլլար : Բայց անոնք երկայն ատեն Սկիւթացոց և Ղսկարիա-

ցոց մէջ բնակած՝ յաբեթական կամ արիական լեզուն ստացած էին, որուն ազգակից է Հայոց լեզուն ալ : շատ շատ թէ որ Պարթևք քիչ մը քաղցեական կամասորի լեզուի խառնուրդ մը ունէին, քիչ մը բայց աւելի նման խառնուրդ մտաւ հայկականին մէջ սարթևաց լեզուէն : Բայց ինչպէս որ ուրիշ կողմանէ Պարթևաց մէջ ամենեւին Աբրահամայ նմանութիւնն չէր մնացեր, ասանկ ալ իրենք զանազանութիւն մը չունեցան Հայաստանի մէջ՝ Հայերէն :

Ղրաղունի անունը՝ ասանկ մեծ քաղաքական բարեաց մը պատճառաւ և թագաւորական ցեղին սեփական ըլլալովն՝ սրբազան և գերապատիւ եղաւ թէ բուն այն ցեղէն իջնողներուն և թէ բնիկ Հայոց, ինչպէս Սուսաւորիչն ալ վկայեց : Նոյն ինքն Սաղարշակ աս մեծ պատիւը հաստատեց երկու բանով : Նախ իր նախնեաց պատկերներն կուռքի պէս կանգնելով Ղրմաւիր Հայկազանց մայրաքաղաքին մէջ՝ արևու և լուսնի կուռքերուն հետ : Երկրորդ օրէնք դնելով թագաւորաց, որ իրենց արքունեաց մէջ միայն իրենց անդրանիկ և յաջորդը պահելով՝ մէկալ զաւկընին զըկեն Ղրարատայ Հաշտենից գաւառը, որ անոնց սեփական կալուած տրւաւ, և անոնց ցեղը Ղրաղունեաց անուամբ ամէն Հայոց ցեղերէն վեր էր : միայն բուն թագաւորական տան երկրորդ կը սեպուէր : որոնք քիչ ատենէն բազմանալով՝ Հաշտենից գաւառին հետ Ղբերանայ և Ղղիովտի գաւառներն ալ ժառանգեցին : այնչափ ճիշտ կը պահուէր այս կարգս, որ ամենեւին հրաման չկար այս երկրորդական Ղրաղունեաց՝ թագաւորական տան կալուածքներուն մէջ բնակիլ : ինչպէս որ յայտնի է Բ Ղրաղայ և Վանելայ պատմութեանէն : Ղրաղունի թագաւորը այնպէս նուիրական էին՝ որ իրենց թագուհին ալ կամ իրենց մերձաւոր Ղրաղունիներէն կ'առնէին, կամ թէ որ օտար թագաւորի աղջիկ առնուին՝ նախ հանդիսիւ զանիկայ Ղրաղունի կ'անուանէին կամ կ'օծէին (թէ որ կրնայ այս-

պէս ըսուիլ), ինչպէս հիմայ Լաւր-
պացի թագաւորը իշխանութեան կամ
քաղաքակցութեան պատիւ կու տան
երեւելի մարդկանց. այսպէս մեծն Տըր-
դատ երբոր զԼճիկէն Լճանայ թագա-
ւորին աղջիկը հարս բերաւ, նախ Լճ-
շակունի գրեշտուաւ, Լճշակունեաց
թագովն և ծիրանեաւ պսակեց, վերջը
ամուսնացաւ: Երբ սկզբամբ և հակա-
ռակ դիպուածով իր պապուն հայրը
Տիգրան Գ՝ Հռովմայեցւոյ Լուկիոս
կայսեր ազգական Ռոմի կամ Հռիփ-
սիմէ աղջիկը կին առաւ, բայց ոչ թա-
գուհի, այլ իբրեւ երկրորդական կին,
անոր համար Լճշակունի չի գրեց, և
անկէ ունեցած զաւկրները՝ մօրերնուն
անունով Ռոմիսեան ցեղ մը հաստատեց
և Լճշակունեաց ցեղին երկիրներէն
դուրս երկիր մը տուաւ անոնց: Եւս-
չափ մեծ և պատուելի էր Լճշակու-
նեաց տունը, որ թագաւորը ալ կը պատ-
կառէին: Ենոր համար շատ դժուա-
րութիւն կը ցուցնէին վերին հայք՝
երբոր Հռովմայեցիք իրենց օտար տնէ
թագաւոր մը կը դնէին: Երկու հա-
րիւր տարի Սաղարշակայ ցեղը ուղիղ
գծով յաջորդեց թագաւորութեան,
ինչուան Ենանէ Լքգարու որդին, որ
անորդի մեռաւ, և թագաւորութիւնը
անցաւ Սանատրիոյ՝ որ Լքգարու քեռ-
որդին էր, բայց ոչ միայն մօր կողմանէ՝
այլ և հօրը կողմանէ Լճշակունի էր:
Ենոր ցեղն ալ ուղիղ յաջորդութեամբ
ինչաւ 300 տարի ինչուան ի Պապ
Տրդատայ թուան թուր. անկէ վերջը
թագաւորեց Սարազդատ որ նոյնպէս
թագաւորական տնէ էր, բայց ուղիղ
անորանիկ ցեղէն չէր. այսպէս ալ Խու-
րով Գ, որ քիչ մը վերջը թագաւորեց,
որուն յաջորդեց իր եղբայրը Սառնա-
պուհ, անոր ալ Լքտաշէս կամ Լքտա-
շիր, որուն օրը վերցուեցաւ Լճշակու-
նեաց թագաւորութիւնը, Վրիստոսի
427 թուականին, 576 տարի քշելէն
ետեւ:

Լքգ այս հայապարթեւ կամ հայ-
Լճշակունի ցեղէն ելան մեր ազգին ա-
մենէն երեւելի թագաւորքն, աշխարհա-

կալքն, աշխարհաշէնքն և բարերարքն.
— անոնցմէ ելաւ մեր հոգւոյ Լուսա-
ւորիչն Վրիգոր. — անոնցմէ հայոց
մտաց անմահացուցիչն մեծն Խաչակ,
Սեսրովսայ և Թարգմանչայ օգնակա-
նութեամբ՝ հայոց դպրութիւնն հաս-
տատելով. — դարձեալ անոնցմէ ելան
ԺԱ և ԺԲ դարուն մէջ կտրիճ իշխան-
ներ և իմաստուն հայրապետներ, Սա-
հրամեանք, Վրիգորեանք և Վերսի-
սեանք, որոնք Ռազրատունեաց թա-
գաւորութեան վերջին նեցուկն եղան,
և Ռուբինեանց ամենէն մեծ պար-
ծանքն, և հայերէն դպրութեան նորո-
գիւ և պահպանիչն. — Եւս լճշակունեաց
մնացած են մեզի հայաստանին ամենէն
գեղեցիկ շինուածքն կամ աւերակն՝
Վառնին և նմանները. — Լճշակու-
նեաց ցեղին պատուոյն և փառացն հա-
մար 200 տարի հայք պատերազմեցան
Պարսից տանը հետ՝ երբոր Սասանեանք
հոնկէ հալածեցին մեծին Լճշակայ
թուներն. — Լճշակունի նախնեացը
համար մեծն Խոսրով 10 տարի տեղէ
տեղ ինչուան ի հնդկաստան հալածեց
Սասանայ որդին, և աշխարհախումբ
հանդիսիւ ելաւ անթիւ զօհերով պա-
տուելու իր նախնեաց յիշատակարան-
ները և քաւելու անոնց եղած նախա-
տիկներ և Լքտաւանայ անսպարտ մահը.
ինքն ալ անոնց սիրոյն զօհ եղաւ դաւա-
ճան Ենակէն թէպէտ և ազգակից, ու-
րուն ձեռքն անիծեալ եղաւ հայաստա-
նի մութ բերելով 26 տարի, բայց օրհ-
նեալ եղև բերքն՝ Վրիգորիոս որ լոյս
բերաւ հայաստանի. — իր հօրը և իր
հօրը հարցը Լճշակունեաց համար՝
քաջն Տրդատ զարմանալի գործերով
իրեն նմանը չթողուց, և երբեմն իր հրդ-
վարտակայ մէջ հունաց և հայոց աս-
տուածներուն խնամոց հետ իր նախնի
Պարթևաց այցելութիւնն ալ կը մաղ-
թէր իր հպատակաց, զրելով այսպէս.
„Եւ ի մեր դիւցախառն Պարթևաց
„հասցէ այցելութիւն, ի փառաց թա-
„գաց և ի քաջաց նախնեաց“, և վեր-
ջը իր փառաւոր և քաջապսակ անհալ-
լի թագը միայն ամենաթագաւորին

Վրիստոսի խոնարհեցուց, և ալ վերջը անոր խաչին ոտքը ձգեց՝ իբրև թէ երկրների դպցրնելով այն թագը՝ զոր արդէն Վրիստոս Մստուած օրհներ էր լքգարու գլուխը. — և այս կրկնակի վսեմ և սրբազան Մշակունեաց թագին և ցեղին համար էր՝ որ երբ քանի մը մտամոլար իշխանք միաբանած կ'ուզէին Պարսից մասնել, մեծն և սուրբն Խաչակ հայրապետն հայոց և ինքն իսկ պահլաունի՝ քահանայապետական գաւազանը Մհարթին ալ բարձր վերցրնելով՝ ինքն զինքն իբրև պարիսպ ի մաստուծեան և ազգասիրութեան մէջ ձգեց հաւատարիմ և անհաւատարիմ հպատակաց՝ պաշտպանելով հայաստանի փառացը բայց անոր բազդին վերջին ժամը հնչեր էր վերէն. Մշակունեաց թագաւորական գաւազանը կոտորած յերկիր ընկաւ, սուրբն Խաչակ յափշտակեց տարաւ յերկինք :

Հ. Ղ. Մ

ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստորագրութիւն Սովետական Գաւառացի :

ՎԼԽԱՒՈՐ քաղաք բոլոր երկրին լմէրէթոյ, Վուրիոյ, Մգուէլի և Սուանէթի, որպէս յառաջն՝ արքայանիստ տէրութեան լմէրէթոյ էր Վութայիս, նոյնպէս և այժմ իշխանանիստ (գուբեռնիայ) կայսերութեանն Սուսաց : Տեղի քաղաքին յառաջնմէ էր ՚ի վերայ լեռնային մեծի բլրոյ ուր կայր և ամրոց մեծ . իսկ այժմ աւերեալ է այն ամրոց հանդերձ մեծ եկեղեցեան Սրաց . գոն քանի մի տունք Սրաց և հայոց՝ հանդերձ առաջնորդարանսն իւրեանց : Բայց այժմ քաղաքն է ՚ի ստորոտ բլրոյն, երկայն և յոյժ կանոնաւոր ձեով, ըստ տարազու Եւրոպայւոյ . և Սիօն գետն կիսակղզի արարեալ զքաղաքն՝ պատելով անցանէ յորդութեամբ ընդ բազում

վտաւանս և ամայ ՚ի ծովն Պոնտոսի :

Սերազնեայք գտանին ՚ի քաղաքիս տունք ոչ աւելի քան զվաթսուն, և են նոքա պարսպաւք ՚ի տուրեւառս վաճառաց և ՚ի ձեռագէտս . արք մարդասերք, և համեստակրօնք . փայլի իմն յերեսս նոցա բնութիւն վաղեմի հայոց . խօսին սոքա ամենեքին ՚ի Սրաց լեզու, և սակաւք են յոյժ յոյժ որք զմերն իմանայցեն . քանզի, ամաչեմ ասել, չգտանին անդէն հինգ անձինք գիտակ լեզուիս հայոց : Ունին երկու փայտակերտ եկեղեցիս յանուն սրբոյ Մստուածածնին, բայց յաւուրս մեր առին հրաման յարքունուստ վասն շինելոյ զնորոգ հոյակապ եկեղեցի, զորոյ զհիմունս են ինքն օրհների յամի 1844, ուր ընթաւայ գետն Սիօն յարեւելից կուսէ եկեղեցւոյն զափամբ քերելով, բայց այն ձեռնարկեալ եկեղեցի դեռ ևս կայ այնպէս, հազիւ հիմնն հաւասարեալ գետնոյն . ունին երկու քահանայս, և չիք առանձինն դպրոց հայոց, և թէպէտ զոյ արքունի ուսումնարան, բայց ՚ի սաղրելոյ բանսարկու անձանց, վերջացեալ է դասատուութիւն լեզուի հայոց :

Եւ ՚ի քաղաքիս և երեսուն տունք հռովմէականաց որոց է նորակառոյց եկեղեցի չքեղ և վայելուչ . ունին և զառանձինն դպրոց . գտանին երկերիւր տունք Սրաց, նոյնչափ ևս և հրէից, որք ունին և զժողովրդանոց կամ զսինակոկայ, են առ հասարակ վաճառականք՝ պարսպաւք ՚ի տուրեւառութիւն աշխարհին :

Որպէս երկիրն նմանապէս և քաղաքն է այգեւէտ, այգիք տեղւոյն են անուող ՚ի մարդկանէ, միայն հանապազօրեայ անձրեով բաւականանան : Տունք և կրպակք առհասարակ փայտակերտք են : Եւ քաղաք մերձակայ գիւղերից յամենայն աւուրս երկուշաբաթի և ուրբաթու խուռն դիմեն ՚ի տոնավաճառն, որ լինի ՚ի քաղաքն . վասն որոյ յայն երկուս աւուրսն լինին անդէն մեծ բազմութիւն և վաճառք դիւրապին իրաց :

Զիտը՝ է գիւղաքաղաք առ ստոր